

# Գրախոսություններ

---

---

ԶԱՐՈՒՀԻ ՀԱԿՈՒՅԱՆ

Yana Tchekhanovets, *The Caucasian Archaeology of the Holy Land: Armenian, Georgian and Albanian Communities between the Fourth and Eleventh Centuries CE*, Brill, 2018, 332 p.

Հայագիտության, կովկասագիտության և արևելաքրիստոնեական ուսումնասիրությունների բնագավառները վերջերս համլրվեցին նոր գիտական հատորով՝ «Սուրբ Երկրի կովկասյան հնագիտությունը. հայկական, վրացական և աղվանական համայնքները 5-11-րդ դարերում» մենագրությամբ, որը լույս է ընծայել հեղինակավոր «Բրիլ» հրատարակչությունը՝ (“*Handbook of Oriental Studies*” մատենաշար, հ. 123): Ուսումնասիրության հեղինակն է Երուսաղեմի Եբրայական համալսարանի դոկտոր, հնագետ, Սուրբ Երկրում կովկասյան և հայկական վաղ քրիստոնեական համայնքների պատմության ուսումնասիրող, Իսրայելի հնությունների պահպանության վարչության առաջատար մասնագետ Յանա Չեխանովեցը:

Ուսումնասիրությունն արժեքավոր է շատ առումներով. Սուրբ Երկրի՝ Հայկական լեռնաշարհի ու Հարավային Կովկասի հետ առնչվող հուշարձանները դեռևս հիմնարար հնագիտական քննության չէին արժանացել, և սա առաջին համալիր գիտական ուսումնասիրությունն է: Բացի այդ, գրքում բերված են Իսրայելի տարածքում վերջին երկու տասնամյակների ընթացքում իրակա-

նացված հնագիտական պեղումների արդյունքները, որոնց մի քանիսի անմիջական մասնակիցն է ինքը հեղինակը, և որոնք վերաբերում են Հայկական լեռնաշարհից ու Հարավային Կովկասից սերող համայնքներին: Մեկտեղելով վաղուց ծանոթ ու բոլորովին նոր հնագիտական մեծածավալ նյութը՝ հեղինակն այն համակողմանի քննության է առնում արդի հնագիտության մեթոդաբանության կիրառության մասին: Միևնույն ժամանակ նա գտածոները ներկայացնում է պատմագիտական ու աղբյուրագիտական նյութերի նորովի ընթերցմամբ, որն էլ ի հայտ է բերում պատմական միջավայրի, ինչպես նաև հուշարձանների կարգավիճակի, գործառույթի և թվագրման ճշգրտումներ: Մենագրությունն արժեքավոր է նաև այն տեսանկյունից, որ նոր հետազոտական հեռանկարներ է բացում մասնագետների առջև՝ հատկապես հայագիտության բնագավառում, քանի որ մեծապես նպաստում է Հայաստանի մի շարք վաղ քրիստոնեական հուշարձանների խնդրահարույց կողմերի պարզաբանմանը:

Գրքում առաջին անգամ անդրադարձ է արվել Իսրայելի հնությունների վարչության և ՌԴ արխիվներում պահվող փաստաթղթերին, ինչը օգնել է վերանայել մի շարք փաստեր: Աշխարհագրական առումով ուսումնասիրությունը ամփոփում է ժամանակակից Իսրայելի, Պաղեստինի ինքնիշխան պետության և Սինայ թերակղզու տարածքները, որոնք մաս են կազմել վաղ քրիստոնեական Պաղեստինի: Իսկ ժամանակագրական առումով այն ընդգրկում է վաղ քրիստոնեական (4-րդ դ. սկսած), բյուզանդական և վաղ իսլամական շրջանները: Ի մի բերելով տվյալ ժամանակաշրջանի և տարածաշրջանի համատեքստում երեք՝ հայկական, վրացական և աղվանական համայնքների ներկայության և գործունեության վկայությունները՝ հեղինակը հաստատում և խիստ կարևորում է քրիստոնեության պատմության վաղ շրջանում այդ համայնքների, ինչպես նաև դրանց առանձին ներկայացուցիչների (Եվթիմիոս Մեծ, Հովհաննես Լուսկյաց, Պետրոս Իբերացի) դերը:

Այստեղ հարկ ենք համարում ուշադրություն հրավիրել ինչպես գրքի վերնագրում, այնպես էլ բուն բնագրում կիրառված «կովկասյան համայնքներ» ձևակերպմանը, որն արդարացի է, երբ խոսքը Վիրքի և Աղվանքի մասին է, սակայն ճիշտ չէ, երբ այն վերաբերում է Հայաստանին: Ընդունելով, որ նման ձևակերպումն արմատացած էր սովետական պատմագիտության մեջ և հաճախ է հանդիպում տարբեր գրքերում, այնուամենայնիվ այն վերանայման կարիք ունի, և դա է թերևս ուսումնասիրության միակ անճշտությունը:

Ուսումնասիրությունը բաղկացած է ներածությունից, հինգ գլուխներից

ու ենթագլուխներից, ինչպես նաև համալրված է մեծաքանակ լուսանկարներով, գծագրերով և քարտեզներով (արխիվային ու ժամանակակից, այդ թվում՝ հեղինակային): Աշխատության շահեկան կողմերից է հարուստ գրականության ցանկը (գրեթե 600 միավոր): Ցանկը գնահատելի է հատկապես ամենավերջին գիտական հրապարակումների, ինչպես նաև Իսրայելի հնությունների պահպանության վարչության հաշվետվությունների և գիտական ծրագրերի տպագիր շարքերի ներկայացման առումով: Գրքի բաժինները արտացոլում են հեղինակի առանցքային հարցադրումները. այն է՝ «Գրական աղբյուրներ», «Հնագիտական վկայություններ», «Ձեռագրեր ու հիշատակարաններ», «Գտածոներ ու բնագրեր», «Կովկասյան համայնքները և Սուրբ Երկիրը»:

Առաջին գլխում հեղինակն անդրադառնում է միջնադարյան աղբյուրներին՝ որպես ժամանակաշրջանի պատմամշակութային անցուղարձի արժեքավոր վկայությունների: Դրանց մեջ են հայկական, վրացական, հունական, ասորական և լատինական աղբյուրները, որոնք բովանդակային առումով ներկայացնում են ժամանակագրություններ, եկեղեցական թղթեր, ուխտագնացների նկարագրություններ և վկայություններ, ինչպես նաև վարքագրական նյութեր:

Հաջորդ գլուխը, որն ուսումնասիրության բուն նյութն է, նվիրված է Պաղեստինում հայկական և վրացական համայնքների գործունեության հնագիտական վկայություններին: Դրանք են վանական կառույցների հիմքերը, արձանագրություններն ու գրաֆիտիները՝ հայտնաբերված եկեղեցիների, տապանաքարերի և խճանկարների վրա, որոնք էլ մանրամասն քննության են առնված: Այս գլխում բացակայում է աղվանական նյութը, քանի որ այդ վանքերը/եկեղեցիները հնագիտորեն դեռևս չեն փաստված, չնայած դրանց գոյությունը վկայված է աղբյուրներում: Բացի այդ հայտնի են Սինայի աղվանական ձեռագիր պատառիկներ, որոնք արժարժված են հաջորդ՝ Ձեռագրեր և հիշատակարաններ գլխում:

Հիմնական գլխի առաջին ենթագլուխը, որն ամենաածավալունն է, ներկայացնում է հայկական հուշարձանները, երկրորդը՝ վրացականները: Այստեղ քննության առնված հնագիտական նյութերի շարքում ընդգրկված են մի անհետացած գտածո՝ վերականգնված արխիվային նյութի հիման վրա, և մեկ նոր բացահայտված կեղծիք: Հայկական և վրացական վանքերի քննությունը ցույց է տալիս, որ առաջինները, որպես կանոն, կենտրոնացած էին քաղաքներում և

դրանց շուրջ՝ հանդիսանալով հիմնականում ուխտագնացների կանգառի վայր (քսենոֆոբիոններ), մինչդեռ մյուսները գյուղական միջավայրում էին և զբաղվում էին գյուղատնտեսությամբ (կինովիոններ): Հիմնական եզրակացությունները ընդհանուր են թե՛ հայկական, թե՛ վրացական համայնքների և նրանց հուշարձանների համար և հանգում են հետևյալին. Պաղեստինի տարածքում գործող հայկական և վրացական համայնքները հիմնադրվել և գործել են բացառապես վանական հաստատությունների շրջանակներում, իսկ որպես աշխարհիկ բնույթի գաղթօջախներ՝ ձևավորվել են 11-րդ դարից ոչ վաղ: Երկու համայնքներին վերաբերող արձանագրություններ կան ինչպես մայրենի լեզվով, այնպես էլ հունարեն՝ գրված հոգևորականների և ուխտագնացների կողմից: Միևնույն ժամանակ, տարբեր վանական հաստատություններում հայտնաբերված հայերեն կամ վրացերեն գրությունները դեռ բավարար չեն պեղավայրը դիտարկելու զուտ «ազգային» տեսանկյունից, քանի որ հաճախ այդ վանական հաստատությունները, հատկապես քաղաքային տիպի, եղել են բազմաէթնիկ (կողք-կողքի թաղված են հայ և հույն, հայ և վրացի վանականներ), ինչը հաստատվում է նաև գրավոր աղբյուրներով: Սյուն վանքերը ներկայացրել են ընդարձակ և բարդ ճարտարապետական համալիրներ, որտեղ ազգային համայնքները, իրենց եկեղեցական կառույցով/մատուռով, վանական խցերով, հյուրատնով ու գերեզմանոցով, զբաղեցրել են վանքի մի հատվածը միայն: Այլ կերպ ասած՝ դրանք ինքնատիպ համալիրներ էին, և այս փաստը լիովին փոխում է մեր պատկերացումները պաղեստինյան վանական միջավայրի մասին, որտեղ մինչև անգամ դավանաբանական տարբերությունները արգելք չէին հանդիսանում համատեղ կեցության:

Նման օրինակ է Երուսաղեմի Դամասկոսյան դարպասների մոտ գտնվող վանական համալիրը, որի մի փոքր մասը բացվել էր դեռ 19-րդ դ., ի հայտ բերելով հայկական արձանագրությամբ ամենաշքեղ՝ «Թռչնային» խճանկարը, իսկ կառույցը թյուրիմացաբար անվանվել Սբ. Պողիկոսոսի մատուռ: Հետագա՝ 1990-2000 թթ. պեղումների արդյունքում բացվեցին համալիրի մյուս հատվածները, որտեղ գտնվեց ևս մեկ հայկական անկյուն՝ Եվստաթիոսի խճանկար արձանագրությունը, ինչպես նաև ի հայտ եկավ վանքի հունական հատվածը՝ համապատասխան արձանագրություններով: Նույն պատկերն ենք տեսնում Զիթենյաց լեռան համալիրում, որն այսօր ուսական եկեղեցու իրավասության

ներքո է և հայտնի է որպես «Շուշանիկի դամբարան»՝ իր հայատառ խճանկարով: Հետագայում այստեղ ևս երկու լրացուցիչ խճանկար հատվածներ են բացվել, իսկ նորագույն պեղումների արդյունքները հաստատել են ինչպես համալիրի երկարատև գործունեության (5-9-րդ դդ.), այնպես էլ նույն տարածքում հայ և հույն վանականների համատեղ կեցության, այլ ոչ թե իրար հաջորդելու փաստը: Իսկ հայտնի Իբերական վանքը ապաստան է ծառայել տարբեր ազգության վանականների համար: Կարևոր է նաև նշել, որ հեղինակը ընդհանրապես քաջ ծանոթ է և՛ հայկական միջնադարյան հնագիտությանը, և՛ հայկական աղբյուրներին, սովորել է նաև գրաբար (աշակերտել է պրոֆեսոր Մ. Սթոունին) և այս ամենը մեծապես նպաստել է նյութի բազմակողմանի և ճշգրիտ լուսաբանմանը:

Հաջորդ՝ «Ձեռագրեր և հիշատակարաններ» գլուխը զգալի լրացնում է հնագիտական նյութը, քանի որ այստեղ անդրադարձ կա Սբ. Կատարինե վանքում անակնկալ հայտնաբերված վրացական և աղվանական ձեռագիր պատանուիկներին ու կրկնագրերին: Վերջիններս արժեքավոր են աղվանական համայնքի պատմության համար և Սուրբ Երկրում նրա գոյության միակ վկայություններն են:

«Գտածոներ և բնագրեր» բաժինը պայմանավորված է այն իրողությամբ, որ հաճախ աղբյուրներում հիշատակված վանքերը չեն հաստատվում (կամ դեռևս չեն հաստատվել) հնագիտորեն և հեղինակը փորձում է բացատրել այս առեղծվածի էությունը: Այս առումով նա իր դիրքորոշումն է հայտնում մի շարք գիտական կարծրատիպերի վերաբերյալ, որոնք ժամանակին հիմնվել են սիրողական բնույթի ուսումնասիրությունների կամ էլ առասպելական դրվագներով համալրված աղբյուրների վրա: Հեղինակը կոչ է անում վերանայել և գտել պատմական տվյալները և հետո միայն համադրել դրանք հնագիտական նյութի հետ:

Ինչպես այս հատվածի, այնպես էլ ողջ ուսումնասիրության կարևոր եզրակացություններից է այն, որ մեր այսօրվա պատկերացումները Սուրբ Երկրում հայկական, ինչպես նաև վրացական և աղվանական համայնքների կարգավիճակի և մյուս համայնքների հետ հարաբերությունների մասին, շատ առումներով կանխակալ են և հաճախ առաջացնում են անլուծելի «հանգուցյներ»: Միգուցե դա է պատճառներից մեկը, որ Անաստաս վարդապետի թվարկած մի շարք հայկական ու նաև աղվանական, ինչպես նաև Մովսես Դասխու-

րանցու մոտ հիշատակված աղվանական վանքերը մինչ օրս չեն հայտնաբերված կամ տեղայնացված: Հեղինակը հույս է հայտնում, որ նոր մոտեցումները, ինչպես նաև միջոլորտային համալիր ուսումնասիրությունները, կնպաստեն խնդրի բացահայտմանը:

Եվ վերջապես՝ հինգերորդ գլուխը նվիրված է հայկական, վրացական և աղվանական կովկասյան համայնքների և Սուրբ Երկրի մշակութային փոխհարաբերություններին: Վերլուծելով հայկական և վրացական եկեղեցական կառույցներն ու դրանց հարդարանքը՝ հեղինակը նշում է դրանցում ակնհայտ տեղական՝ պաղեստինյան կամ, որ նույնն է, վաղ բյուզանդական ավանդույթների առկայությունը: Դա վերաբերում է նաև պաղեստինյան արվեստանոցներին, որոնց վարպետները, առաջնորդվելով համընդհանուր ձևանմուշներով, ստեղծում էին հարուստ խճանկար գորգեր՝ անկախ եկեղեցական կառույցի կամ մեկենասի ազգային պատկանելությունից: Որոշակի ազգային նկարագիր չունեն նաև խեցեղենն ու թաղման ծեսը, որոնք սովորաբար ամենավանդականն են: Հարցադրման շրջանակներում կարևորվում է լեզվի խնդիրը, քանի որ ուստագնացները տիրապետում էին մի քանի լեզուների, և դա հաճախ շփոթություն է առաջացնում մասնագետների միջավայրում (հայերը տիրապետում էին հայերենին ու հունարենին, Աղվանքից ժամանածները՝ մայրենի լեզվին և հայերենին):

Մի ենթագլուխ էլ հատկացված է դավանաբանական խնդիրներին: Չնայած, որ վաղ միջնադարը աչքի է ընկնում Քաղկեդոնի տիեզերաժողովից հետո եկեղեցիների տրոհմամբ, իսկ ավելի ուշ Միակամություն շուրջ եկեղեցական վեճերով, սակայն, ինչպես վկայում են գտածոները, դա մեծ հաշվով ազդեցություն չի գործել պաղեստինյան հուշարձանների վրա: Պատմագիտության մեջ վաղուց են քննության առնվել Մեծ Հայքի, Վիրքի և Աղվանքի եկեղեցիների երուսաղեմյան ակունքները և հենց այդ համատեքստում հեղինակը կարևորում է Սուրբ Երկրի այս վանական հաստատությունների կապը հայրենիքի հետ և դրանով պայմանավորված միջմշակութային կապերը (երուսաղեմյան ծիսակարգի ազդեցությունը, Ճաշոցի վաղ թարգմանությունները, Սուրբ Գերեզմանի մանրակերտերը, ձեռագրերի և ծիսական առարկաների ձեռքբերումն ու տեղափոխումը հայրենիք): Այդ անմիջական փոխհարաբերությունների արդյունքում է, որ կովկասյան և հայաստանյան հողի վրա ի հայտ է գալիս սրբազան տարածքների ձևավորման ավանդույթը (պաղեստինյան սրբավայրերի ընդօ-

րինակման և անվանումների կրկնություն), ինչպես նաև վեր են հառնում «նոր երուսաղեմներ» (Զվարթնոց): Վերջին ենթագլխում ամփոփված են հայկական և վրացական հնավայրերի քարտեզագրման արդյունքները և դրանց համեմատական տախտակները, որոնք առավել ակնհայտ և հասկանալի են դարձնում Սուրբ Երկրում այդ համայնքների գործունեության ծավալներն ու աշխարհագրությունը: Սակայն, ինչպես նշում է հեղինակը, այն նախնական բնույթ է կրում, քանի որ Սուրբ Երկրի հնագիտության մեջ կովկասագիտությունը դեռևս երիտասարդ բնագավառ է, իսկ երուսաղեմի, Բեթղեհեմի և Թաբոր լեռան տարածքներում ծրագրվող պեղումները նոր բացահայտումներ են խոստանում: Ըստ ամենայնի, բոլոր հիմքերը կան հուսալու, որ առաջիկայում Իսրայելի հնագիտական ուսումնասիրությունների շրջանակում կովկասագիտությունը զգալի առաջընթաց կապրի և այս արժեքավոր գիտական հատորը կունենա իր շարունակությունը: